Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Վեց տարեկանի պատրաստվածությունը դպրոցինԱռարկան՝ դասվար

Հետազոտող ուսուցիչ՝ Մաքրուհի Վարդկեսի Գրիգորյան

Ուսումնական հաստատություն՝ Արզականի Խ.Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց

Երևան **2023**

Բովանդակություն

- Ներածություն 4
- Հիմնական մաս 7
- Եզրակացություն 31
- Գրականություն 33

Ներածություն

Այսօր դպրոց են գալիս երեխաներ, որոնց մի մասը նախադպրոցական հիմնարկներից են, մի մասը՝ առանց որևէ նախապատրաստվածության։ Նրանք ուսման նկատմամբ ունեն տարբեր վերաբերմունք, մի մասը տառաճանաչ է և կարդալ ու հաշվել գիտի։ Արդի ժամանակներում առավել կարևորվում է 5-6 տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը նախապատրատվելու հարցը։ 5-6 տարեկան երեխաներին դպրոցական ուսուցմանը ժամանակին նախապատրաստելը նպաստում է նրանց մեջ ուսումնական աշխատանքի նկատմամբ սեր և հետաքրքրություն դաստիարակելուն, անհամեմատ հեշտացնում է մանկապարտեզային կյանքից անցումը դպրոցական կյանքին, ուսումնառությանը։ Ապահովվում է նաև կրթության երկու աստիճանների՝ նախադպրոցական և դպրոցական տարրական ուսուցման միջև եղած անհրաժեշտ հաջորդականությունը։ Երեխային դպրոցին նախապատրաստել ասելով՝ շատ ծնողներ ու նույնիսկ մանկավարժներ հասկանում են նրան գիտելիքներով (գրելու, կարդալու, թվաբանական հմտություններով) զինելը։ Սակայն, դպրոցին նախապատրաստել ասելով՝ առաջին հերթին հասկանում ենք՝ ինքնուրույնություն։ Երեխան դպրոց հաճախելուց առաջ արդեն պիտի լիարժեք տիրապետի ինքնուրույն հագնելու-հանվելու, իր անկողինը՝ թեկուզև անփույթ, հավաքելու, ուտելու, իր պայուսակը դասավորելու, զուգարանից կոկիկ օգտվելու, իրեն հուզող հարցերը տալու, խնդրանք արտաբերելու և այլ նմանատիպ տարրական հմտությունների։ Ինքնուրույնության պակասը ամենաշատն է խանգարելու երեխային ուսուցման գործընթացում։ Շատ կարևոր է ուշադրությունը

կենտրոնացնելու կարողությունը: Ծնողների մեծ մասը գիտի, որ փոքրիկ երեխաները դժվարանում են իրենց ուշադրությունը երկար ժամանակով կենտրոնացնել միևնույն գործի կամ դասի վրա: Սա անհանգստության առիթ չէ, և ոչ մի դեպքում պետք չէ երեխայի մեջ ինչ-որ շեղումներ փնտրել: Նմանատիպ խնդիրներն այս տարիքի երեխաների համար միանգամայն բնական են: Բազմաթիվ ծնողներ բողոքում են, որ երեխան դժվարանում է իր տեղում նստել երկար ժամանակ: Պատճառը կարող է լինել երեխայի ֆիզիկական կամ մտավոր խիստ ծանրաբեռնվածությունը: Հնարավոր է, որ նա բավարար չի քնում կամ հանգստանում, կամ օրվա ընթացքում սթրեսային իրավիճակներում է հայտնվում: Պետք է անպայման պարզել երեխայի դժվարությունների պատճառները:Լսել կարողանալը շատ կարևոր հմտություն է, որը պիտի օգնի նրան գիտելիքներ ձեռք բերել, որպես անձ ձևավորվել բազմազան

իրավիճակներում ողջ կյանքի ընթացքում:{4}

Հետազոտական աշխատանքի նպատակն է՝ ուսումնասիրել վեց տարեկաններիպատրաստվածությունը դպրոցին գյուղական համայնքում և քաղաքում:

Նպատակին հասնելու համար իրագործել ենք հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել եմ հետազոտվող թեման գիտամեթոդական գրականության մեջ նգործնականում
- Սաների հետ գործնական աշխատանք, նյութերի փորձարկում,
- Արդյունքների ամփոփում և վերլուծություն:

Հիմնական մաս

Վեց տարեկան երեխաների անատոմիաֆիզիոլոգիական և հոգեկան զարգացմանառանձնահատկությունները

Տարիքային <<զարգացման սոցիալական իրադրության>> գաղափարի բացահայտումը Վիգոտսկու կողմից ցույց տվեց, որ զարգացման տարիքային սահմաններն անշարժ չեն և կախված ներքին և արտաքին պայմանների համակցությունից՝ երեխայի զարգացման բնութագիրը կարող է այլ լինել: Գիտական հետազոտությունները ապացուցել են որ վեց տարեկաններն իրոք կարող են ընդգրկվել դպրոցական ուսուցման համակարգում, եթե ապահովվի դպրոցական ուսման նկատմամբ երեխայի աճող սոցիալական պահանջմունքի բավարարումը և ստեղծվեն այնպիսի պայմաններ, որոնք չվնասեն երեխայի առողջությանու նրա զարգացման բնական ընթացքին:

Այս խնդրի լուծմանն ուղղված հետազոտությունները ցույց տվեցին, որ վեց տարեկանների անատոմիա-ֆիզիոլոգիական և հոգեկան զարգացման առանձնահատկությունները համատեղելի են դպրոցական ուսուցման հատուկ պայմանների հետ:

Վեց տարեկանի անատոմոֆիզիոլոգիական զարգացումը բնութագրվում է հետևյալ առանձնահատկություններով:

Շարունակվում է երեխայի օրգանիզմի հասունացումը, քաշն ավելանում է ամսեկան մոտ 200 գ-ով, հասակը՝ 0.5 սմ, տեղի է ունենում մարմնի մասերի համամասնական փոփոխություն: Երեխայի ուղեղի քաշը մոտենում է չափահաս

մարդու ուղեղի քաշին: Այս տարիքում երեխայի շարժողական կարողությունները լավ են ձևավորված: Մեծանում է նաև պայմանական ռեֆլեքսների ձևավորման արագությունը: Դիմացկունության պակասի հետևանքով այս տարիքի երեխաները բավականին արագ հոգնում են հատկապես միապաղաղ վիճակում և շարժումների արգելման դեպքերում: Եվ՝ անշարժությունը, և՝ շարժումների սակավությունը էապես վատացնում են ներքին օրգանների զարգացումն ու իջեցնում երեխայի աշխատունակությունը:

Արտակարգ կարևոր է երեխայի կյանքը տանը և դպրոցում ճիշտ կազմակերպելը: Օրգանիզմի հակազդիչ փոփոխությունների մեջ երևան եկող հոգնածությունն արտահայտվում է սուբյեկտիվ զգացողությամբ և օբյեկտիվ երևույթներով: Աշխատանքային հունի մեջ մտնելու ժամանակամիջոցին երևան եկող հոգնածության

զգացողությունը կարող է վերացվել մանկավարժի կողմից առույգացնող միջավայր, 9աշխատանքի նկատմամբ հետաքրքրություն ստեղծելու և այլ համապատասխան միջոցներով:{2}

1.Վեց տարեկան երեխայի սոցիալ- բարոյական և ճանաչողական փորձի անբավարարությունը:

Սոցիալ-բարոյական փորձը, շրջապատի և հատկապես մեծերի հետ շփվելու, հաղորդակցվելու ունակությունը նրա դաստիարակության, պարտքի և պատասխանատվության գիտակցության ձևավորման հիմքն է:

Այդ փորձը օգնում է երեխային աստիճանաբար հաղթահարել իր վարքի իմպուլսիվությունը և սովորել հաշվի նստել ուրիշների, հատկապես հասակակիցների կարծիքի և պահանջների հետ և որոշակի իրադրություններում զիջել ուրիշների պահանջներին:Ուսուցման բովանդակությունն առավել միօրինակ է աշակերտի դպրոցական ուսուցման առաջին ամիսներին: Բացի այդ՝ երեխան ամեն օրպետք է պատրաստի դասերը, ենթարկվի օրվա ռեժիմին, պահպանի դպրոցի կանոնները, հետևի իր տետրերի, գրքերի մաքրությանը, կարգավորի իր պայուսակը և այլն:

Բոլորովին այլ կերպ են ձևավորվում նրա հարաբերությունները ուսուցչի, քան մանկապարտեզի դաստիարակի կամ ծնողի հետ:

Երեխայի համար մանկապարտեզի դաստիարակչուհին մայրիկից հետո ամենամոտ մարդն էր, ուստի ժամանակ է հարկավոր, որպեսզի երեխան հարմարվի ուսուցչի՝ որպես հասարակության ներկայացուցչի պահանջներին և դիրքին: Կտրուկ փոխվում է երեխայի դիրքը: Երբ երեխան հաճախում էր մանկապարտեզ, նա ամենամեծերի խմբում էր,իսկ դպրոց գալով, նա չնայած զգում

է, որ ավելի մեծ է, նրա մեջ ձևավորել է մեծի դիրքորոշում, որը նրա ,,զարգացման սոցիալական իրադրության ամենաէական կողմերից է և առաջացնում է նրա հոգեկանում դպրոց գալու հետ կապված կարևոր, դրական ապրումնե, սակայն դպրոցում նա հայտնվում է դպրոցականների ամենափոքրերի խմբում, և նրա՝ մեծ դառնալու հետ կապված ապրումները առաջացնում են հակասական զգացմունքներ:

2.Երկրորդ կարևոր առանձնահատկությունը նրա պահանջմունքների հրատապության և իմպուլսիվ ակտիվության գերակշռությունն է:

Վեց տարեկան երեխայի մոտ ծագում են բազմազան իրար հաջորդող և փոխարինող պահանջմունքներ:Դրանց առանձնահատկությունն այն է, որ դրանք ապրվում են որպես

անհետաձգելի, հրատապ, ցանկալի, սակայն գործը դրանով չի վերջանում:Անհետաձգելի

ցանկություններն այնքան ուժեղ են, որ ստիպում են փոքրերին անմիջապես ձեռնարկելդրանք բավարարելու գործողություններ՝ չմտածելով, թե ինչ հետևանքներ կբերեն դրանք: Ինչքան աղքատ է երեխայի սոցիալական փորձը, այնքան դժվար է նրա համար հրաժարվելիր ցանկություններիցկամ հետաձգել դրանց բավարարումը: Իմպուլսիվ ակտիվությունը դրսևորվում է նաև ուսուցչին բավարարելու հարցում. Դեռուսուցիչը հարցը չի վերջացրել, իսկ նա արդեն առաջ է ընկնում և ,,պատասխանում է,,

3.Երրորդ էական առանձնահատկությունը ձգտումն է խաղային գործունեության:

Վեց տարեկան երեխան իր ֆունկցիոնալ միտումների ուժով չի կարող ապրել առանց ակտիվության, առանց խաղի: Արգելել երեխայի խաղընշանակում է խանգարել նրա զարգացմանը:Այդ պատճառով էլ վեց տարեկան մարդու հատկություններն անտեսելը կարող է հանգեցնել միայն մեկ բանի. Նա չի սիրի դպրոցը, ուսումը,գրքերը, ուսուցչին:Վեց տարեկանին մատչելի է խաղ- ուսումը, որն աստիճանաբար կարելի է վերափոխել ուսում- խաղի:

Դպրոցական ուսուցմանը հոգեբանորեն պատրաստ լինելը ենթադրում է երեխայի

<<հրատապ զարգացման գոտու>> բավարար զարգացվածություն, որը հնարավորություն կընձեռի կրթության բովանդակությանյուրացումը մոտեցնել երեխայի <<զարգացման մերձակա գոտուն>>: Իսկ այն, ինչ կարող է անել երեխան մեծերի օգնությամբ, նրանց հետ համագործակցելով, նրա <<զարգացման մերձակա գոտու>> սահմաններում է: Համագործակցություն մեծերի հետ օգնությամբ՝ հասկացվում է շատ լայն իմաստով՝ հուզող հարցին պատասխանելուց սկսած

մինչև առաջադրանքի լրիվ լուծումը և ցուցադրումը երեխային: Եթե երեխայի հրատապ զարգացման գոտին այնքան ցածր է, որ ուսումնական նյութի յուրացումը չի կարող մոտենալ նրա <<զարգացման մերձակա գոտուն>>, այսինքն՝ երեխան այն չի կարող յուրացնել առանց ուսուցչի օգնության, նշանակում է՝ երեխան հոգեբանորեն պատրաստ չէ դպրոցական ուսուցմանը, քանի որ այդ դեպքում նա չի կարող սովորել, որն էլ հոգեբանորեն կճնշի նրա անձնավորության զարգացման բոլոր մյուս կողմերը:

Դպրոցական ուսուցմանը պատրաստ լինելու չափանիշները.

1.Երեխայի մոտիվացիոն զարգացումը.նա ուզում է սովորել, նա ունի ճանաչողական պահանջմունքներ, որոնք չի կարող բավարարել տանը: Նա ցանկանում է դպրոց գնալ, սովորել դպրոցում, դպրոցական ուսուցումը գնահատել որպես հասարակայնորեն կարևորև գնահատելի գործ:

2.Դպրոցականի <<ներքին դիրքորոշումը>> ծագում է նախադպրոցական և դպրոցական տարիքի սահմանին և հնարավորություն է տալիս երեխային ներգրավել ուսուցման գործընթացում որպես գործունեության սուբյեկտ:

Վեց տարեկանի ուսուցումը դպրոցում կարելի է միայն դպրոցական ուսուցմանը երեխայի հոգեբանորեն պատրաստ լինելու դեպքում, հակառակ դեպքում այն վտանգավոր է երեխայի համար:

Դպրոց ընդունվող երեխայի տարիքային առանձնահատկությունները

Երեխայի ծավալած ուսումնական գործունեության արդյունավետությունը, սովորողների վերաբերմունքը հետագա ուսման նկատմամբ և նրանց բոլոր հաջողությունները հետագա գործունեության ընթացքում պայմանավորված են նաև դպրոցական առաջին օրերի մանկավարժահոգեբանական տեսանկյունով ճիշտ կազմակերպմամբ, այն առանձնահատկությունների հաշվառմամբ, որանք հատուկ են վեց տարեկան երեխաներին:Միայն այն դեպքում կարելի է արդյունավետ և նպատակասլաց ղեկավարել նրան զարգացումը, երբ տարվող աշխատանքները կառուցված են նրանց տարիքային առանձնահատկությունների իմացության և դրանց հաշվառման հիման վրա:

Հոգեբանների ուսումնասիրությունները ցույց են տվել, որ վեց տարեկաններն ,,ապրում են տարիքային ճգնաժամ,,, որի ժամանա նրանց մեջ ընդգծուն են դառնում հակասության ոգին, կամակորությունը, անբավարարվածությունը, ,,ես ինքս,, դիրքորոշումը, ըմբոստությունը, խանդը:

Օրինաչափորեն այդ առանձնահատկությունները կարելի է խմբավորել.{2}1.Կազմաբնախոսական առանձնահատկություններ.

Դպրոց ընդունվող տարիքի երեխայի մեջ նկատվում է օրգանիզմի բուռն

զարգացում, որն ընթանում է այդ համակարգերի փոփոխություններով: Դրանցով պայմանավորված՝ երեխան ձեռք է բերում իր ուժերին և մտավոր կարողություններին համապատասխան ծանրաբեռնվածություն կրելու հնարավորություն, որը դպրոցին պատրաստ լինելու կարևոր գործոններից է: Լուրջ փոփոխություններ են կատարվում երեխայի նյարդային համակարգում, մասնավորապես դա վերաբերում է գլխուղեղին: Հախուռն զարգանում է երեխայի հենաշարժողական համակարգը: Ձևավորման փուլում է գտնվում տարածական-տեսողական ընկալման կարողությունը, որի կարևոր և անհրաժեշտ պայմանը տեսողության սրությունն է, տարածության մեջ կողմնորոշվելու կարողությունը: Աստիճանաբար զարգանում և կատարելագործվում է տեսողությունը,մասնավորապես

կատարելության է հասնում երկակնյա տեսողությունը: Զարգացման առանձնապես հսկայական թռիչք է ապրում կարդալու կարողության ձևավորման համար կարևոր տեսողական դաշտը:

2.Հոգեբանական առանձնահատկությունները.

Երեխայի հոգեբանական առանձնահատկությունների համալիրն իր մեջ ներառում է անձնային և կամային ոլորտները,գիտելիքների և պատկերացումների ընդհանրացնող, դասդասող պարզ համակրգերը, որոշ ուսումնական ունակություններ, ընդունակությունները և այլն:

- Ավագ նախադպրոցական տարիքում սկսվում են ձևավորվել երեխայի տարաբնույթ գործունեության և վարքի նոր մեխանիզմներ, ձևավորվում են դրդապատճառային և կայուն կառույցներ, նոր անձնային պահանջմունքներ՝ սեփական անձի ճանաչում և ընդունում, իր իրավունքների գիտակցում և մեծերի և հասակակիցների կողմից դրանք հարգելու պահանջ:
- Ծագում են գործունեության դրդապատճառային նոր տեսակներ, մեծերի նպատակային գործունեության շնորհիվ նրանց մեջ ձևաավորվում և զարգանում են կամային վարքի հիմքեր, երեխան յուրացնում է բարեկիրթ վարքի,բարոյական նորմերի որոշակի՝ իր տարիքին հարիր համակարգ:
- Բացահայտ է,որ այս տարիքի երեխաներն ունեն կոնկրետ մտածողություն. Նրանք ավելի դյուրին են ընկալում, հասկանում ու յուրացնում այն, ինչ կապված է իրենց կենսափորձի հետ, ինչ տեսնում են, զգացել, ըմբռնել և կատարել են:
- Ավագ նախախադպրոցական տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է, որի ժամանակ սկսում են հետաքրքրվել և

իրականացնել մտավոր պարապունքներ:

- 6-7 տարեկան երեխաներն իրենց կատարած աշխատանքին տրված գնահատականն ընկալում են ոչ իբրևիրենց գիտելիքների,կոնկրետ առաջադրանքի կամ արարքի արժևորում, այլ որպես իրենց անձի նկատմամբ ուսուցչի ունեցած դրական կամ բացասական վերաբերմունքի արտահայտություն:
- Նրանք լավ են հասկանում անմիջականորեն իրենց ուղղված խոսքը, հաճախ չեն ըմբռնում ամբողջ դասարանին ուղղված հրահանգները:
- Գիտելիքների ձեռքբերման նախնական փուլում երեխաների մեջ գերիշխում է մեխանիկական հիշողությունը:

Հաշվի առնելով այս առանձնահատկությունները՝ պետք է ուսուցման գործընթացը կազմակերպել՝ օգտագործելով երեխաների բոլոր զգայարանները. Ուսուցիչն ավելի քիչ պիտի խոսի, ավելի շատ ցուցադրի, ավելի քիչ կատարի, ավելի շատ մասնակից դարձնի: Սոցիալական- անձնային առանձնահատկությունները

Ուշագրավ է այն հանգամանքը, որ դպրոց առաջին անգամ ոտք դնող երեխայի մեջ անձնային փոփոխությունները կատարվում են քայլ առ քայլ, աստիճանաբար, արտաքնապես աննկատ ու փոքր ջեռքբերումների ճանապարհով: Ավագ նախադպրոցականը այլևս դադարում է պարզամիտ և անմիջական լինելուցև շրջապատողների համար դառնում է առավել անհասկանալի: Սա հաստատում է այն, որ երեխայի վարքն այնպիսին է, ինչպիսին նրա ներքինն է. Նրա վարքը հասկանալի է նդյուրինությամբ է <<ընթերցվում>> շրջապատողների կողմից:{1}

Երեխայի պատրաստվածությունը դպրոցին

Վերլուծելով 5 -7 տարեկան երեխաների սոցիալական և հուզական հմտությունների ուկարողությունների զարգացման ոլորտում տնտեսապես զարգացած երկրների փորձը, վեց կազմել է նախադպրոցականի սոցիալական կոմպետենտությունների ցանկը:

Այդ ցանկը կազմված է 45 հմտություններից և կարողություններից, որոնք արտացոլում են երեխայի կյանքի տարբեր ասպեկտները՝ կոմունիկացիան, էմոցիոնալ ինտելեկտը, ագրեսիան կառավարելը, սթրեսը հաղթահարելը, կրթական հաստատությանը հարմարվելը:

Նշված հմտություններից շատերը հնարավոր չէ ձևավորել ուղղակիորեն: Սոցիալական կոմպետենտությունների կառուցվածքը տրվում է այն բանի համար,

որպեսզի մեծահասակ դիտորդը կոնկրետ երեխայի վարքը կարողանա համեմատել սոցիալապես կոմպետենտ նախադպրոցականի վարքի էտալոնի հետ:

I. Կրթական հաստատությանը հարմարվելու հմտություններ:

II. Հասակակիցների հետ շփվելու հմտություններ:

III. Զգացմունքների հետ գործ ունենալու հմտություններ:

IV. Ագրեսիայի այլընտրանքի հմտություններ:

V. Սթրեսը հաղթահարելու հմտություններ:

I. Կրթական հաստատությանը հարմարվելու հմտություններ

1. Լսել կարողանալը

Հմտության բովանդակությունը. նայել զրուցակցին, չընդհատել նրան, նրա խոսքը խրախուսել գլխով անելով, փորձել հասկանալ հաղորդածի իմաստը: Եթե երեխան ուշադիր լսում է խոսողին, նրա համար ավելի հեշտ է ընկալել և մտապահել ինֆորմացիան, հետաքրքիր հարցեր տալ և զրուցակցի հետ պահպանել երկխոսությունը:

2. Օգնություն խնդրելու ունակություն

Ունակության բովանդակությունը. պատրաստ է ընդունել, որ «մենակ չեմ կարող հաղթահարել, ուրիշի օգնությունն է պետք», մյուսներին ցույց է տալիս վստահություն, պատրաստ է ընդունել ոչ միայն օգնելու նրանց համաձայնությունը, այլև մերժելը կամ օգնելը հետաձգելը:

3. Շնորհակալություն հայտնելու ունակություն

Ունակության բովանդակությունը. նկատում է այլ մարդկանց կողմից իր նկատմամբ լավ վերաբերմունքը, ուշադրության նշանները և օգնությունը: Դրա համար նրանց շնորհակալություն է հայտնում:

4. Ստացած հրահանգներին հետևելու ունակություն

Հմտության բովանդակությունը. կարողանում է հասկանալ հրահանգը և համոզվել, որ այն, ինչ ցանկանում էին իրեն ասել, ինքը ճիշտ է հասկացել, լսածի վերաբերյալ իր վերաբերմունքը բարձրաձայն արտահայտելու ունակություն (պատասխանել, արդյոք ինքն անելու է դա):

5. Աշխատանքը մինչև վերջ կատարելու կարողություն

Հմտության բովանդակությունը. այլ զբաղմունքի անցնելու գայթակղությանը դիմակայելու, աշխատանքը մինչև արդյունքին հասցենելու ունակություն:

6. Քննարկմանը մասնակցելու կարողություն

Հմտության բովանդակությունը. որոշակի թեմայով զրույցին մասնակցելու, խոսելու և լսելու կարողության: Դրա համար երեխան պետք է չընդհատի զրուցակցին, տա թեմային վերաբերող հարցեր, որպեսզի զրուցակիցը շարունակի պատմել, խոսակցությունը չշեղի այլ թեմայի կամ իր վրա:

7. Մեծին օգնություն առաջարկելու կարողություն

Հմտության բովանդակությունը. կարողանում է տեսնել այն իրավիճակները, երբ ուրիշները օգնության կարիք ունեն և չեն կարող ինքնուրույն հաղթահարել առաջացած խնդիրները: Կարողանում է պարզել, թե ինքն ինչով կարող է օգնել մեծերին, առաջարկել իր օգնությունը:

8. Հարցեր տալու կարողություն

Հմտության բովանդակությունը. կարողանում է զգալ, որ իրեն ինչ-որ բան հասկանալի չէ, ունակ է որոշել, թե ով կարող է օգնել, պատասխանել հետաքրքրող հարցերին, հարցով քաղաքավարի դիմել մեծին:

9. Իր կարիքները ներկայացնելու կարողություն

Հմտության բովանդակությունը. ուշադիր է իր կարիքների նկատմամբ (ֆիզիոլոգիական և հուզական). Սեփական օրգանիզմի խնդիրները ժամանակին զգալու, սեփական զգացմունքները լսելու կարողություն: Սոցիալապես ընդունված ձևերով, առանց մյուսներին խանգարելու իրենց գործով զբաղվել, կարողանում է շրջապատողներինհայտնել սեփական կարիքների մասին:

10. Իր զբաղմունքի վրա կենտրոնանալու կարողություն

Հմտության բովանդակությունը. կարողանում է չշեղվել իր պարապմունքից, հետաքրքրված է նրանով, ինչով զբաղված է: Հասկանում է, թե ինչն է գործից շեղում և փորձում է վերացնել այն:

11. Աշխատանքի թերություններն ուղղելու կարողություն

Հմտության բովանդակությունը. կարողանում է հետևել առաջադրված աշխատանքի օրինակին: Ցանկանում է ուղղել աշխատանքի թերությունները կամ սխալները, որպեսզի իրեն ավելի լավ զգա:

Այս տարիքի երեխաների համար նախատեսված չափորոշիչները դասակարգված են ըստ զարգացման փուլերի.

- Շարժողական ոլորտ
- Խոսքի և հաղորդակցման ոլորտ

- Իմացական ոլորտ
- Սոցիալական , հուզական և անձնային ոլորտ
- Ինքնասպասարկման, առողջության պահպանման և անվտանգության ոլորտ
- Սովորելու նկատմամբ վերաբերմունքի ոլորտ

Չափորոշիչները դաստիարակ-մանկավարժների համար ստեղծում են այն հիմքը, որի վրա նրանք կարող են պլանավորել ուսուցումը: Չափորոշիչների հիման վրա կարող են մշակվել ուսումնական ծրագրեր և պլաններ, որոնք մանկավարժների համար համարվում են աշխատանքային փաստաթղթեր: Հաճախակի ծնողները անհանգստանում են , թե արդյո՞ք իրենց երեխաները դպրոց գնալուց առաջ ճիշտ գիտելիքներ են ստանում:

Դպրոցական ուսուցմանը պատրաստվածության գնահատման ժամանակ՝ հոգեբանական պատրաստվածության ուսումնասիրման համար նպատակահարմար է օգտագործել համակարգային մոտեցում, որում իրականացվում է հուզա-կամային ոլորտի հետազոտում, մտավոր և մոտիվացիոն պատրաստվածությունների դիագնոստիկա:

- Հուզակամային պատրաստվածության գնահատումը իր մեջ ընդգրկում է հուզակամային կարգավորման մակարդակի սահմանումը:Կամային գործողությունների զարգացման մակարդակի բացահայտումը և ուշադրության կամայականությունները:
- Մտավոր պատրաստվածության գնահատումը ենթադրում է խոսքային զարգացման մակարդակի սահմանումը, ճանաչողական գործողությունների (ընկալումների) զարգացման մակարդակը, ակնառու պատկերավոր մտածողության և հիմանկանմտածական գործողությունների մակարդակը:
- Մոտիվացիոն պատրաստվածության գնահատումը ուղղված է դպրոցում ուսուցմանվերաբերմունքի սահմանմանը:
- Հանձնարարությունները երեխաներին ներկայացվում է անհատականորեն: Ուսումնասիրման ժամանակը չպետք է գերազանցի 40 րոպեն, որը հանդիսանում է ավագ նախադպրոցականի մաքսիմալ աշխատունակությունը:
- Մտավոր պատրաստվածության հետազոտման ժամանակ ընդգծվում է օգնության 3 տիպ՝
    - Հուզական- կանոնավորող
    - Ուղղորդող

- Ուսուցողական
- Հուզական-կանոնավորող օգնությունը ենթադրում է հրամայական ազդեցություններ և գնահատում մանկավարժի կողմից:
- Ուղղորդող օգնությունը արտահայտում է մանկավարժի կողմից հանձնարարությունների նախնական էտապի կազմակերպմամբ:
- Ուսուցողականը կապված է երեխայի նախնական ուսուցմանը՝ գործողությունների նոր մեթոդի՝ ուսուցման անհրաժեշտության համար:

Մինչ այս կատարված հետազոտությունների արդյունքում, բացահայտվել է.

1. Առաջին ՝ բարձր մակարդակը ցուցաբերում են երեխաները, որոնք փորձնական խնդիրների լուծման ժամանակ հուզամակային կանոնավորման ավելի բարձր մակարդակ են ցուցաբերում
2. Երկրորդ մակարդակի նախադպրոցականների մոտ նկատվում է հուզակամային կանոնավորման կախվածություն հանձնարարված խնդիրների ծավալից:
3. Երրորդ խմբի երեխաները ունեն ցածր մակարդակ. Խոսքի թերզարգացումը այս երեխաների մոտ համընկնում է մտածողության ցածր մակարդակի հետ : Խնդիրների լուծման ժամանակ նրանց միշտ անհրաժեշտ է ուսուցչի օգնությունը և միջամտությունը, քանի որ չեն կարողանում ինքնուրույն տիրապետել խնդիրների լուծման ընդհանրացված մեթոդների և փոխանցել նրանց նույնանման իրավիճակներ:

4-5 տարեկան երեխան պետք է կարողանա ՝

- Համակարգված ձևով շարժվել
- Խոսել նախադասություններով և օգտագործել շատ տարբեր բառեր,
- Հասկանա հականիշները , օրինակ հաստ-բարակ, երկար և կարճ,
- Խաղալ ուրիշ երեխաների հետ,
- Առանց օգնության հագնվել
- Պատասխանել պարզ հարցերին,
- Հաշվել 5-10 առարկաներ,
- Իմանալ անձնական հիգիենայի տարրական

կանոնները։{3}Դպրոցական պատրաստվածության ստուգում (Թեստ)

1. . Ես և իմ ընտանիքը

- Ի՞նչ է քո անունը։ Նշի՛ր քո ազգանունը և հայրանունը։

- Քանի՞ տարեկան ես։ Ե՞րբ է քո ծննդյան օրը։

- Ի՞նչ է հայրիկի, մայրիկի անունն ու հայրանունը։ Ի՞նչ մասնագիտությամբ են նրանք աշխատում։

- Եղբայր կամ քույր ունե՞ս, քանի՞ տարեկան են։

- Ո՞րն է քո տան հասցեն և հեռախոսահամարը։ Ո՞ր քաղաքում ես ապրում։ Ի՞նչ է ձերերկրի անունը։ Ի՞նչ այլ երկրներ կարող եք անվանել։

1.Բնություն 🌿

-Բնության և եղանակի ի՞նչ երևույթներ գիտես:

-Ո՞րն է ձյան և կարկուտի տարբերությունը:

-Անվանի՛ր բնության գույները:

- Անվանի՛ր ծառերի և ծաղիկների ի՞նչ տեսակներ գիտես:

- Ինչպե՞ս են ծառերը տարբերվում թփերից:

-Ի՞նչ մրգեր և բանջարեղեններ կարող ես թվարկել:

-Ինչպե՞ս են մրգերը տարբերվում բանջարեղեններից և հատապտուղներից:

- Թվարկի՛ր քեզ ծանոթ կենդանիների անուններ:

- Ինչպե՞ս են տարբերվում կենդանիներն ու թռչունները:

- Ինչպե՞ս տարբերել վայրի կենդանիներին ընտանի կենդանիներից:

-Անվանի՛ր չվող և ձմեռող թռչուններին, գիշատիչ և խոտակեր կենդանիներին: Ինչո՞ւ ենայդպես կոչվում:

3.Ժամանակ և տարածություն.⏱

-Օրվա մասերը հերթականությամբ անվանի՛ր: Ինչո՞վ է տարբերվում ցերեկըգիշերվանից:

- Ո՞րն է ավելի երկար՝

մեկ րոպեն, թե՞ մեկ

ժամը,օրը, թե՞

շաբաթը,

ամիսը, թե՞ տարին:

-Թվարկի՛ր շաբաթվա օրերը հերթականությամբ:

- Անվանի՛ր տարվա եղանակները:

Տարածության մեջ կողմնորոշվելու ունակությունների զարգացման ողջ

աշխատանքը կառուցվում է հակադիր զույգ պատկերացումների «աջ-ձախ» ձեռքերի և կողմերի տարբերակման վրա: Այս կապը պետք է ամրապնդել ռեժիմային տարբեր պահերի, առօրյա կյանքում, խաղերի օգնությամբ, նկարներում և զբոսանքի

ժամանակ:

-Պարզել տարածության մեջ կողմնորոշման հմտությունները:

-Հաշվի՛ր առարկաների քանակը նկարի աջ և ձախ մասերում:

-Բռնի՛ր ձախ ականջդ, փակի՛ր աջ աչքդ և այլն:

-Աջ ձեռքում վերցրո՛ւ որքան հնարավոր է շատ հաշվեձողիկներ, իսկ հիմա՝ ձախում:

-Տարածի՛ր հաշվեձողիկները ըստ գույնի և երկարության:

-Հավաքածուում գտիր ամենաերկար և ամենակարճ հաշվեձողիկները: Դրանք դիրիրար վրա, իսկ հիմա կողք կողքի:

4. Մասնագիտություններ.

-Նշի՛ր մի քանի մասնագիտություն:

-Ո՞ր մասնագետն է սովորեցնում երեխաներին:

-Ո՞վ է մարդկանց բուժում:

-Ո՞վ է գրում բանաստեղծություններ:

-Ո՞վ է ստեղծում երաժշտությունը:

-Ո՞վ է նկարում:

-Ո՞վ է այն մարդը, ով տներ, շենքեր է կառուցում:

-Ի՞նչ մասնագիտություն ունի այն մարդը, ով խաղում է կինոյում և թատրոնում:

5. Արվեստ և սպորտ.

- Ի՞նչ սպորտաձևեր գիտես: Ո՞ր սպորտաձևերն են պահանջում գնդակ,

չմուշկներ:

- Ի՞նչ հայտնի նկարիչների, երգիչների, դերասանների անուններ գիտես:

- Ո՞ր թանգարաններում ես եղել:

6. Անվտանգության կանոններ

-Ի՞նչ վայրերում և լուսացույցի ո՞ր գույնով է թույլատրվում փողոցն անցնել:

- Ի՞նչ կանես, եթե մոտակայքում լուսացույց չկա:

-Ինչպե՞ս պահպանել անվտանգության կանոնները հրդեհի ժամանակ:

7. Մոտիվացիա.

- Ինչո՞ւ է պետք սովորել: {5}

Եզրակացություն

Տեսական գրականության ուսումնասիրությունը և վերլուծությունը մեզ բերեցին հետևյալ եզրահանգումների.

- Եթե փորձենք ամփոփել սանի դպրոցին պատրաստվածության հիմնահարցի վերաբերյալ խորհրդային հոգեբանների մոտեցումներն ու տեսակետերը, նրանց կատարած ուսումնասիրությունների և հետազոտությունների արդյունքները, ապա տեսնում ենք, որ այն բավականին լայն հասկացություն է և ընդգրկում է սանի զարգացման գրեթե բոլոր ոլորտները: Նրանք առանձնացնում են դպրոցին պատրաստվածության հետևյալ բաղադրիչները. անձնային(դրդապատճառային) պատրաստվածություն; ինտելեկտուալ պատրաստվածություն, սոցիալ- հոգեբանական պատրաստվածություն, հուզակամային պատրաստվածություն: Նշվածների զարգացվածության բավարար մակարդակն էլ ապահովում է հետագա ուսումնական գործունեության արդյունավետությունը և դրանով իսկ վկայում սանի դպրոցական ուսուցման պատրաստվածության բարձր ցուցանիշների մասին:
- Իմ կատարած հետազոտության արդյունքում պարզ դարձավ, որ գյուղական համայնքում բնակվող, նախադպրոցական որևէ հաստատություն չհաճախածերեխաներն այդքան էլ պատրաստ չէին դպրոցին,որքան պատրաստ էիննախադպրոցական հաստատություն հաճախածները և քաղաքում բնակվողները: Չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր երեխա ունի ուսումնական

տարբերդրդապատճառներ, և դժվար է որոշել և միանշանակ գնահատել դրանք, որովհետևհարցազրույցի ժամանակ այդ տարիքի երեխաները տալիս են ոչ թե անկեղծ ուճիշտ, այլ խրախուսանք ակնկալող պատասխաններ։

Գրականություն

1. Ջուլիետա Գյուլամիրյան <<Հայոց լեզվի տարրական ուսուցման մեթոդիկա>>Երևան 2009թ.
2. Գարեգին Ղույումչյան <<Մանկավարժություն>>
3. https://iverh.com/yerexayi-patrastvatcuthyuneh-dprocin/
4. Վորլդ Վիժն <<10 հարց ոի պատասխան 3-6 տարեկան երեխաների մասին>> Երևան 2017
5. https://www.facebook.com/time.of.creative.teacher?cft[0]=AZXuEsaxGLvp7I19S1z6KlUwn5ajlIsElXOS3kqvWn4YY7KsmqI55s8ASMYRd6dCd8bWL1bBqS7NYyA6LMFYSqhxnp45aDHNsKWcjw55FnQHcg_nq9xzTuoGNtxU49pfY5NIbiqjHkZMB4qNqksMZVvGW1NnlnQe-7BcAkcEz4pz0HNOV8ombaukqdZpk6dYu0A&__tn__=-UC%2CP-R